2021-2022 ուսումնական տարում Տավուշի մարզի **2**-րդ դասարանում սովորողների ուսումնառության արդյունքների ոչ միավորային գնահատման՝ բնութագրերի ձևանմուշների վերաբերյալ

Նախաբան

Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանվել է, որ 1–4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի 1-ին կիսամյակում իրականացվելու է ոչ միավորային գնահատում, իսկ սովորողների ուսումնառության արդյունքների գնահատման նոր կարգի համաձայն՝ յուրաքանչյուր սովորողի համար որպես կիսամյակի ամփոփում կազմվելու է ուսումնական առաջադիմության բնութագիր բոլոր առարկաներից:

Տավուշի մարզի փորձարկող 2-րդ դասարանի ուսպլանով նախատեսված բոլոր առարկաների վերջնարդյունքների հիման վրա կազմվել են բնութագրերի հնգաստիճան սանդղակներ՝ որպես օգնություն ուսուցչին:

Յուրաքանչյուր աղյուսակի առաջին սյունակում տրված են տվյալ առարկայի ուսումնական ծրագրով սահմանված թեմաները (ԵՇԱ, Շախմատ, Մաթեմատիկա և այլն) կամ առարկայական չափորոշչով նախատեսված հիմնական հասկացություններն ու ենթահասկացությունները (օր.՝ Մայրենի), իսկ աղյուսակի առաջին տողում ներկայացված են Ա, Բ, Գ, Դ, Ե սյունակները՝ ցույց տալով առարկայական չափորոշչով սահմանված վերջնարդյունքների կատարման աստիճանը 1-ին կիսամյակի համար՝ նվազման կարգով:

Ամեն առարկայի ուսուցիչ կարող է կազմել յուրաքանչյուր սովորողի բնութագիրը՝ հաշվի առնելով հետևյալ սկզբունքները.

- Պետք է շարժվել վերևից ներքև և հորիզոնական՝ գնալով ձախից աջ (Ա-Ե):
- Կարելի է ընտրել որևէ սյունակի նկարագրությունը ամբողջությամբ կամ համադրել հատվածներ տարբեր ձևակերպումներից, քանի որ նույն վերջնարդյունքի կատարման մակարդակների բաժանումը պայմանական է:
- Պետք է խուսափել մակարդակների բաժանել երեխաներին, քանի որ միշ հավանական է, որ որևէ սովորող բոլոր վերջնարդյունքների մասով կապահովի նույն մակարդակը:
- Չի կարելի սյունակները համեմատել կամ նույնացնել միավորների (5-միավորային համակարգի կամ 10-միավորային համակարգի աստիճանների հետ):
- Բոլոր բնութագրերը կազմվել են դրական շեշտադրմամբ. պետք է բացառել «Չի կարողանում», «Չգիտի», «Դժվարանում է» արտահայտությունները:
- Ուսուցիչը կարող է ըստ անհրաժեշտության խմբագրել կամ լրամշակել ձևակերպումները՝ առավել հարմարեցնելով դրանք տվյալ սովորողի ցուցաբերած արդյունքին:
- Բնութագիրը պետք է կցել սովորողի անձնական գործին:

Ցուցումներ բնութագրերի կազմման վերաբերյալ

Ներկայացված աղյուսակների Ա սյունակում ներկայացված են առարկայի առաջին կիսամյակին ուսուցնվող թեմաների վերջնարդյունքները՝ ձևակերպված բնութագրի ձևով: Սյունակը ներկայացնում է վերջնարդյունքների ապահովման առավելագույն աստիճանը: Հաջորդ սյունակները ներկայացնում են յուրաքանչյուր վերջնարդյունքի ապահովման տարբեր աստիճանները նվազման կարգով: Վերջին՝ Ե սյունակում ներկայացված է վերջնարդյունքի ապահովման նվազագույն աստիճանը:

Ուսուցիչը կարող է յուրաքանչյուր սյունակի բնութագրերին ծանոթանալով՝ ընտրել յուրաքանչյուր երեխայի համար այն ձևակերպումները, որոնք առավելապես համապատասխանում են նրա ուսումնառության արդյունքներին կիսամյակի ավարտին: Այս աշխատանքը կատարելիս ուսուցիչը պետք է հիմնվի ողջ կիսամյակի ընթացքում կիրառած ձևավորող գնահատման արդյունքների (ստուգաթերթերի, համառող գրառումների, ռուբրիկների, դիտարկումների, հայտորոշիչ առաջադրանքների և այլ գործիքների պարբերական կիրառման վերլուծությունների վրա):

Բնութագրերը կարող են կազմվել տարբեր սյունակների բնութագրումներից ընտրված նկարագրություններից՝ ամբողջացնելով սովորողի ամփոփ բնութագիրը տվյալ առարկայից: Նույն տողից միայն մեկ բնութագրիչ կարող է ներառվել կոնկրետ սովորողի բնութագրի մեջ, քանի որ յուրաքանչյուր տողում նկարագրված են նույն վերջնարդյունքի ապահովման տարբեր աստիճանները: Չի բացառվում, որ սյունակներից մեկի բնութագրումները լիովին համընկնեն կոնկրետ սովորողի առաջադիմության արդյունքներին, սակայն առավել հաճախ դա կլինի տարբեր սյունակներից առանձնացված բնութագրիչներից կազմված խճանկար:

«Շախմատ» առարկայի կիսամյակային ամփոփիչ բնութագրի ձևանմուշ

Կազմեց Նաիրա Մովսիսյանը

	Թեմաներ	Ա	Բ	Գ	Դ	Ե
1.	Խաղադաշտ Դաշտեր Գծեր Մասեր	Անվանում է, ցույց է տալիս խաղադաշտի դաշտերը, գծերը, մասերը: Տեղորոշում և գրանցում է դաշտերը:	Անվանում է, ցույց է տալիս խաղադաշտի գծերը, մասերը, անվանում է լատիներեն տառերը:	Անվանում է, ցույց է տալիս խաղադաշտի գծերը:	Լսելով անվանումները՝ ցույց է տալիս խաղադաշտի մասերը և գծերը:	Օգնությամբ և հուշումով ցույց է տալիս և անվանում խաղադաշտը:

2.	Խաղաթղթեր Արքա Թագուհի Նավակ Փիղ Ձի Ձիավոր	Կատարում է տրամաբանված քայլեր խաղաթղթերով՝ հարձակվում է, ստեղծում է կրկնակի հարված, հսկում է, վերցնում է, շախ է տալիս, մատ է անում, մեկնաբանում է խաղաթղթի արժեքը, դերը խաղի ընթացքում: Թվարկում է խաղաթղթերի մոտավոր արժեքները:	Կատարում է քայլեր խաղաթղթերով, վերցնում է խաղաթղթեր արքայով, շախ է հայտարարում: Թվարկում է խաղաթղթերի մոտավոր արժեքները:	Կատարում է քայլեր խաղաթղթերով, վերցնում է խաղաթղթեր արքայով: Թվարկում է խաղաթղթերի մոտավոր արժեքները:	Անվանում և ցույց է տալիս խաղաթղթերը: Թվարկում է խաղաթղթերի մոտավոր արժեքները:	Օգնությամբ և հուշումով ցույց է տալիս և անվանում խաղաթղթերը:
3.	Շախ	Սահմանում է շախը, շախ է տալիս, ցույց է տալիս՝ ինչպես պաշտպանվել շախից:	Սահմանում է շախը, շախ է տալիս:	Կարողանում է շախ տալ:	Նկատում է շախը:	Օգնությամբ և հուշումով նկատում է շախը:
4.	Մատ	Սահմանում է մատը, մատ է անում, ցույց է տալիս՝ ինչպես պաշտպանվել մատից: Ստեղծում է մատ մեկ քայլից: Ստեղծում է մատային դիրքեր:	Սահմանում է մատը, մատ է անում, ցույց է տալիս՝ ինչպես պաշտպանվել մատից: Ստեղծում է մատ մեկ քայլից:	Սահմանում է մատը, մատ է անում, ցույց է տալիս՝ ինչպես պաշտպանվել մատից:	Նկատում է մատը:	Օգնությամբ և հուշումով նկատում է մատը:
5.	Պատ, ոչ-ոքիի տեսակները	Սահմանում է պատը, ներկայացնում է ոչ-ոքիի տեսակները, խուսափում է պատից:	Սահմանում է պատը, ներկայացնում է ոչ-ոքիի տեսակները:	Սահմանում է պատը:	Ներկայացնում է ոչ-ոքիի տեսակները:	Օգնությամբ և հուշումով ներկայացնում է ոչ-ոքին:

6.	Մատ 1 ֆայլից	Հասկանում է իր առջև դրված խնդիրը, կատարում է տրամաբանված ֆայլեր: Ստեղծում է մատ մեկ ֆայլից: Պայքարում է ազնիվ: Կառավարում է հույզերը: Հետաքրքրությամբ է կենտրոնանում: Ուշադիր է: Մտածում է արագ:	Հասկանում է իր առջև դրված խնդիրը, կատարում է տրամաբանված ֆայլեր: Ստեղծում է մատ մեկ ֆայլից: Պայքարում է ազնիվ: Կառավարում է հույզերը: Կենտրոնանում է հետաքրքրությամբ: Ուշադիր է:	Հասկանում է իր առջև դրված խնդիրը, կատարում է տրամաբանված ֆայլեր: Ստեղծում է մատ մեկ ֆայլից: Կենտրոնանում է հետաքրքրությամբ: Ուշադիր է:	Հասկանում է իր առջև դրված խնդիրը, կատարում է տրամաբանված ֆայլեր: Ստեղծում է մատ մեկ ֆայլից:	Օգնությամբ և հուշումով ստեղծում է մատ մեկ ֆայլից:
7.	Մատային դիրքերի ստեղծում	Հասկանում է իր առջև դրված խնդիրը: Ստեղծում է մատային դիրքեր բազմաթիվ խաղաբարերով: Մտածում է արագ: Ազատ և հետաքրքրությամբ ստեղծագործում է: Հետաքրքրությամբ է կենտրոնանում: Ուշադիր է:	Հասկանում է իր առջև դրված խնդիրը: Ստեղծում է մատային դիրքեր 3-5 խաղաբարերով: Ստեղծագործում է հետաքրքրությամբ: Հետաքրքրությամբ կենտրոնանում է: Ուշադիր է:	Հասկանում է իր առջև դրված խնդիրը: Ստեղծում է մատային դիրքեր 3 խաղաբարերով: Հետաքրքրությամբ կենտրոնանում է: Ուշադիր է:	Հասկանում է իր առջև դրված խնդիրը: Ստեղծում է մատային դիրքեր 3 խաղաբարերով:	Օգնությամբ և հուշումով ստեղծում է մատային դիրքեր 3 խաղաբարերով: